17–19–ՐԴ ԴԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՇՈՒՂՆԵՐԸ ԵՎ ՊՈԵՏՆԵՐԸ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐՈՅԱՆ
հայցորդ
Երևանի պետական համալսարան
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
saroyantatev@gmail.com

ՀՏԴ՝ 392.8
DOI: 10.54503/1829-4278.2025.1-162

Ամփոփագիր

Այս հոդվածում ներկայացվում են 17–19–րդ դարերում Արևելյան Հայաստանի և հարևան Իրանի տարածքում սուրճի և սրճարանային մշակույթի ձևավորման ու զարգացման պատմության որոշ դրվագներ: Սրճարանները՝ որպես հանրային ժամանցի միջավայրեր, 17–րդ դարից ի հայտ եկան Արևելքի և Եվրոպայի խոշոր քաղաքներում: Սկզբնական շրջանում դրանք հիմնականում տղամարդկային ժամանցի տարածքներ էին, որտեղ ժողովրդական ստեղծագործողները՝ երաժիշտները, պոետներն ու նկարիչները, արտահայտվելու և իրենց արվեստը հանրությանը ներկայացնելու հնարավորություն ունեին: Հատկանշական է, որ դրանք նաև միջմշակութային հաղորդակցության ու փոխանակության յուրահատուկ միջավայրեր էին: Կան վկայություններ, որ սրճարաններում ներկայացումներ էին կազմակերպում նաև հարևան երկրներից «հյուրախաղերով» այցելությունների եկած ժողովրդական արտիստները: Ինչպես Իրանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում դրկից երկրների ստեղծագործողները փոխադարձաբար հանդես են եկել մե՛րթ մեկի, մե՛րթ մյուսի սրճարաններում, որի արդյունքում հայ արվեստագետներն ու գրողները ճանաչված են եղել Իրանում, տիրապետել պարսկերենին: Նույնը կարող ենք ասել նաև Հայաստանի սրճարաններում հանդես եկող պարսիկ ստեղծագործողների մասին:

Ժամանակի ընթացքում սրճարաններում տիրող անցուդարձը և ժամանցը փոխակերպումների է ենթարկվել՝ աստիճանաբար ժողովրդական արվեստային ներկայացումների հարթակից վերածվելով մարդկանց ավելի լայն շրջանակների համար հանդիպումների, սրճախմության շուրջ զրույցի ու քննարկումների միջավայրի:

Սակայն ժամանակի պահանջներին ու արվեստների դրսևորումներին զուգընթաց՝ սրճարանները կորցրին իրենց նախկին համբավը և հետզհետե դարձան լայն հասարակության այցելության վայրեր, ուր մինչ այսօր հնչում է կենդանի երաժշտություն, տեղի են ունենում գրքերի շնորհանդեսներ, բանախոսություններ:

Բանալի բառեր. Հայաստան, Իրան, սրճարան, աշուղ, պոետ, արվեստ, գրականություն, երաժշտություն, պոեզիա

Ներածություն

Սուրճի մուտքը Եթովպիայից դեպի Եմեն, այնուհետև՝ Կահիրե, Մեքքա, Մեդինա, Կոստանդնուպոլիս ու Սպահան, թվագրվում է 15–16-րդ դդ.[1]: Ըմպելիքը, ի սկզբանե դիտվելով վայելքի ու հանգստի միջոց, մատուցվել է դահվե-խանեներ/սրճարաններում, որոնք ծառայել են որպես տղամարդկանց լավագույն հավաքատեղիները: Դրանք ոչ միայն սուրճ խմելու, այլև, առաջին հերթին, հանդիպումների, մտքեր փոխանակելու, սեղանի խաղեր խաղալու, քաղաքական հարցեր քննարկելու միջավայրեր էին: Հաճախ սրճարաններ էին այցելում պոեզիա և երաժշտություն ունկնդրելու համար: Արևելյան աշխարհը, սեփականաշնորհելով այս մշակույթը, օրինակ ծառայեց մյուս երկրների, ինչպես նաև Արևմտյան և Արևելյան Հայաստանների համար: Սրճարանները բացվում էին քաղաքներում, մարդաշատ վայրերի ու կենտրոնական կառույցների՝ եկեղեցիների, մզկիթների կամ շուկաների հարևանությամբ՝ դրանով իսկ մարդաշատ այցելություններ ապահովելով: Կարելի է ասել՝ սուրճի մեծ սիրահարներ էին համարվում արվեստի գործիչները, գրականագետները, ինչպես նաև արհեստավորները: Եվ հենց այդ ժամանակ արվեստագետները հարթակ էին փնտրում՝ ներկայացնելու իրենց ստեղծագործությունները, մրցակցելու ոլորտի այլ ներկայացուցիչների հետ և հանրահռչակելու սեփական անձն ու գործունեությունը: Այսկերպ սրճարանները դարձան մշակութային կյանքում ինքնադրսևորման պահպանողն ու սերնդեսերունդ փոխանցողը:

Այս հոդվածում փորձ է արվում ներկայացնել 17–19-րդ դարերում Իրանում և Հայաստանում ձևավորված սրճարանների մշակութային ու ստեղծագործական անցուդարձը, մասնավորապես՝ պոետների և աշուղների արվեստային դրսևորումները:

Նյութի հետազոտության համար կիրառվել է թեմատիկ ընդհանրացման մեթոդը: Ուսումնասիրվել են թեմային առնչվող ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանում լույս տեսած գրքերն ու հոդվածները:

[1] **Weinberg B.A., Bealer B.K,** *The World of Caffeine: The Science and Culture of the World's Most Popular Drug,* UK: Routledge Press, 2002, p. 3–4.

Պատմահամեմատական մեթոդի օգնությամբ փորձել ենք վեր հանել հիշյալ դարերում երկու երկրներում առկա սրճարանային ստեղծագործական մշակույթը, ինչպես նաև վերլուծել առկա աղբյուրները:

17–18–րդ դդ. իրանական սրճարանների նկարագիրը

Իրանական սրճարանները՝ որպես հանրային միջավայրեր ու մարդկային հաղորդակցման յուրահատուկ տարածքներ, գոյություն ունեն դեռ 16–րդ դ.–ից: Դրանք հայտնի են եղել ղահվեխանե (սրճարան) անվամբ: Առաջին նման սրճարանը բացվել է Ղազվին քաղաքում Սեֆյանների օրոք: Ավելի ուշ՝ Աբբաս Մեծի իշխանության օրոք, ղահվեխանեները դարձան առավել հայտնի: Դրանց զգալի աճ նկատվեց հատկապես մեծ քաղաքներում՝ Թեհրանում, Թավրիզում, Սպահանում և Ռեշտում: Այդ ժամանակահատվածում էր, որ ղահվեխանեները որոշ առումով դարձան նաև արվեստային տարածքներ: Դրանք աստիճանաբար վերածվեցին բանաստեղծների, գրողների, արվեստագետների և սոցիալական միջին ու բարձր խավերի ներկայացուցիչների հավաքատեղիների[2]:

Որոշ սրճարաններ ձեռք են բերել շատ բարձր վարկանիշ: Ավելին, նշենք՝ թագավորական հյուրընկալությունները տեղի էին ունենում այստեղ՝ իբրև հարգանքի մատուցման վայր: Հայտնի է, որ Շահ Աբբաս Մեծն անհայտ և ծպտված երբեմն այցելել է տարբեր ղահվեխանեներ, այսինքն՝ պարզ է, որ այդ վայրերը կարևոր նշանակությունը են ունեցել Սեֆյան դինաստիայի շահերի համար[3]:

Ղահվեխանեները 17–19–րդ դդ. նաև համարվել են ժողովրդական արվեստների տներ. օրինակ՝ ցուցադրվել են իրանական դրամատիկ պատմություններ և ղահվեխանե գեղանկարչական արվեստ: Դրանցից մի քանիսը ցուցադրվում են Թեհրանի Ռեզա Աբբասի թանգարանում: Կարելի է ասել, որ այստեղ հնչած ժողովրդական բանահյուսության և գեղանկարչական արվեստն ամբողջովին արտացոլել է տվյալ ժամանակաշրջանի Սեֆյան Իրանի առօրյա կյանքը, մարդկային փոխհարաբերությունները, վարքերն ու բարքերը, քանի որ ժամանցային ներկայացումների միջոցով է, որ սովորական մարդիկ էլ ավելի լավ են հասկացել իրանական հարուստ և հոյակապ արվեստն ու գրականությունը[4] (նկ. 1):

Ղահվեխանեում իրենց արվեստն են փորձել ներկայացնել անգամ շրջիկ դերասանները, որոնք ելույթ ունենալու տեղ չունեին: Իսկ կան

---

[2] **Mobarhani M.,** *Ghahve Khaneh, The Culture of Coffee House*, 14.01.2020 https://www.tasteiran.net/stories/10065/iranian-coffee-house-ghahve-khaneh (մուտք՝ 22.01.2024)

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

նաև վկայություններ, որ սրճարանների սեփականատերերից ոմանք եղել են սիրողական բանաստեղծներ կամ երաժշտագետներ[5]:

17-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը, ուղևորվելով դեպի Կոստանդնուպոլիս և Սև ծով, 1666-1669 թթ. պարբերաբար այցելել է Իրան: Իսկ 1672 թ., վերսկսելով ճանապարհորդությունը, այցելել է Վրաստան, Հայաստան, իսկ 1673-ին՝ Սպահան, որոնց տպավորությունների հիման վրա կազմել է «Ten-volume book The Travels of Sir John Chardin» աշխատությունը: Այս աշխատությունը համարվում է Սեֆյան Իրանի և, ընդհանրապես, Մերձավոր Արևելքի մասին տվյալ ժամանակաշրջանի լավագույն ուսումնասիրություններից մեկը, որը կարևոր տեղեկություն է պարունակում տարածաշրջանի բնակիչների կենսակերպի մասին:

Ճանապարհորդը պարսկական սրճարանները համարում է քաղաքային ժամանցի ամենագեղեցիկ վայրերը: Դրանք, ըստ Շարդենի, հանրային տարածքներ էին, որտեղ մարդիկ զբաղված էին քննարկումներով և բանավեճերով. օրինակ՝ հենց այնտեղ էին քննարկվում օրվա լուրերը, իսկ քաղաքական գործիչները՝ ազատորեն և առանց անհանգստանալու, քննարկում էին քաղաքական հարցեր:

Շարդենը, լինելով մանրուքներ նկատող ճանապարհորդ, նկարագրում է նաև այդ ժամանակաշրջանի սուրճի ու թեյի տները. «... ընդարձակ սենյակներ էին, որոնք գտնվում էին քաղաքների լավագույն հատվածներում: Դրանցից շատերում առկա էին ջրային ավազաններ: Այս հիանալի սենյակներն ունեցել են նաև պատկերասրահներ, որտեղ մատուցվել է սուրճ, իսկ մոլլաներն ու դերվիշները կամ բանաստեղծներն արտասանել են չափածո և արձակ ստեղծագործություններ»[6]:

Շարդենից բացի՝ այլ ճանապարհորդներ ևս հաստատում են, որ սրճարաններում աշուղներ կային, որոնք ընթերցում էին բանաստեղծություններ, պատմում պատմություններ՝ դրանով իսկ բանարվեստը կապելով սրճարանների հետ, որոնք հանդիսատեսին տեղավորելու համար հաճախ ստեղծվում էին ամֆիթատրոնային ոճով[7]:

Նկատառենք, որ սրճարաններում, որոնք հաճախ գտնվել են և գործել մզկիթների հարևանությամբ, ներկա էին կրոնական առաջնորդները ևս՝ հանրությանը բարոյախրատական պատմություններ պատմելու նպատակով[8]:

Սակայն ժամանակի հետ, ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Իրանում, դրանք դարձան քաղաքական ընդվզումների հավա-

---

[5] Նույն տեղում:

[6] **Sir John Chardin**, *Travels in Persia, 1673-1677*, New York: Dover Publication, 2012, p. 316.

[7] **Mokhber S.**, *The Persian Mirror Reflections of the Safavid Empire in Early Modern France*, New York: Oxford University Press, 2019, p. 101.

[8] Նույն տեղում, էջ 101:

քատեղիներ: Շահ Աբբաս I-ը, մտահոգվելով սրճարաններում տիրող առավել ազատ քննարկումների մթնոլորտով, սկսում է սահմանափակումներ մտցնել դրանց հանդեպ, իսկ 1650-ական թթ. վերջին՝ արգելում դրանց գործունեությունը: Այնուամենայնիվ, իրանական սրճարանները՝ որպես ազատ մտքի արտահայտման հանրային տարածքներ, ֆրանսիացիներին հնարավորություն են ընձեռել ընկալելու ու ընդօրինակելու գաղափարը՝ այն հարմարեցնելով իրենց սովորույթներին[9]:

Ֆրանսիական սրճարանների ամենաակտիվ այցելուներից Վոլտերն ահա նման խոսքերով է գովաբանել 17-րդ դարի Իրանը. «Այն ժամանակ Պարսկաստանն ավելի քաղաքակիրթ էր, քան Թուրքիան. մարդկանց բարքերն ավելի մեղմ էին. արվեստն ավելի մեծ հարգանք էր վայելում: ... Գիտությունները նույնպես ավելի մեծ խրախուսանքի հանդիպեցին. չկար մի քաղաք, որ չունենար բարձրաշխարհիկ գրականության դասավանդման մի քանի քոլեջներ: Ընդհանուր առմամբ, Պարսկաստանի մասին մեր ունեցած տեղեկությունները հիմք են տալիս մտածելու, որ երկրի վրա միապետություն չի եղել, որտեղ մարդիկ լիարժեք օգտվեին մարդկության իրավունքներից: Աշխարհի արևելյան մասերում ոչ մի ժողովուրդ այդքան մեծ ռեսուրսներ չուներ կյանքի ողբերգության՝ մտքի տկարության դեմ: Նրանք հանդիպում էին ընդարձակ սրճարաններում, որտեղ սպասարկողները մատուցում էին այս լիկյորը, որը Եվրոպա չէր ներմուծվել մինչև 17-րդ դարի վերջը»[10]: Ուշագրավ է, որ Եվրոպայում, մասնավորապես՝ Ֆրանսիայում, տարածման և սրճարանների մշակույթի հիմնման գործում կարևոր դեր ունեցան հենց պարսկահայերը: Սպահանից Գրիգորը և ևս երկու հայեր Մազարին փողոցի վրա բացում են սուրճի տներ, որտեղ սիրում էր այցելել Վոլտերը[11]:

Նոր Ջուղայի հայ վաճառականները, դառնալով պարսկական մետաքսի արտահանող մենատերեր, իրենց հետ Եվրոպա էին ներմուծել նաև արևելյան բարիքներից սուրճը: Բնամթերքը դարձավ Նոր Ջուղայի վաճառականների վաճառած ապրանքներից ամենապահանջվածը, մասնավորապես՝ Մարսելի նավահանգստում[12]: Սրան զուգահեռ՝ հայ վաճառականները Եվրոպայից Իրան էին ներմուծել ոչ միայն եվրոպական նիստուկացը, հագ ու կապը, այլև սրճարանների սեղանների հայտնի խեցիներով խաղը[13]:

Իրանի սրճարանների մասին ուշագրավ տեղեկություններ կան նաև պատմաբան Ռալֆ Հաթթոքսի աշխատությունում. «Պարսկական սրճա-

[9] Նույն տեղում, էջ 101:
[10] **Mokhber S.**, *The Persian Mirror*..., էջ 143-144:
[11] *Home Friend*, vol. 1, London: Society for promoting Christian knowledge, 1854, p. 51.
[12] **Aslanian S.,** *From the Indian Ocean to the Mediterranean. The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, California: University of California Press, 2011, p. 75-76.
[13] **Sir John Chardin**, *Travels in Persia*..., p. 273.

բաններում, որոնք հետագայում գրեթե ամբողջությամբ վերածվեցին թեյարանների, ժողովրդականություն էին վայելում Շահնամեի ընտրանիները: Ասմունքողները, կարծես, տարբեր ծագում ունեին: Ոմանք, ինչպիսիք են՝ աղքատ ուսանողները կամ գիտնականները, աշխատում էին կես դրույքով, որպեսզի լրացնեն իրենց՝ ավելի քիչ եկամտաբեր զբաղմունքները: Կային նաև պրոֆեսիոնալ ասմունքողներ: Երբեմն թվում է, ոմանք նման բեմադրություններ են տալիս ոչ թե կարիքից դրդված, այլ զուտ զվարճացնելու համար: Դրամատիկ զվարճությունների շարքում են նաև տարբեր տեսակի տիկնիկային ներկայացումները, որոնք ցուցադրվել են հատկապես Ռամադանի ժամանակ»[14] (նկ. 2):

Չնայած ժամանակի իր մեծ պահանջարկին՝ 1650-ական թթ. Շահ Աբասի կողմից արգելված[15] սրճարանները վերաբացվեցին արդեն Ղաջարների դինաստիայի կողմից 18-րդ դարավերջին: Նրանց օրոք սրճարանները վերականգնեցին իրենց նախկին հանրային դերակատարումը, վերստին դառնալով գրողների, բանաստեղծների և վերնախավերի հավաքի ու հաղորդակցման միջավայրեր, որտեղ զրուցում էին տարբեր թեմաների շուրջ՝ քաղաքականությունից մինչև գրականություն[16]:

19-րդ դարի իրանական սրճարանները

Իրանական սրճարանները քաղաքների համար որպես սոցիալականացման կարևոր կենտրոններ չէին կարող երկար ժամանակ արգելված մնալ: Ժամանակի ընթացքում հանրային շփման մշակույթի ակտիվությունը, Ղաջարական դինաստիայի մոտեցումները դրդեցին սրճարանների վերաբացմանը:

19-րդ դարի կեսին իրանական քաղաքներում՝ մասնավորապես Թեհրանում, սրճարանների թիվը զգալիորեն սկսեց աճել: Ի տարբերություն Սեֆյանների ժամանակ գործող սրճարանների, որոնք հիմնականում նախատեսված էին մեծահարուստների համար, Ղաջարների ժամանակ դրանք ավելի հասանելի դարձան հասարակության լայն շերտերին՝ համարվելով հասարակական կյանքի կենտրոններ: Յուրաքանչյուր ղահվեխանե, ելնելով մասնագիտությունից, պատկանել է համապատասխան համայնքի: Համքարություններն ունեին իրենց առանձին ղահվեխանեները, որոնք գործել են որպես «աշխատանքի փոխանակման» վայրեր: Առևտրականները, պատկանելով համապատասխան համքարության, գիտեին որտեղ գտնել իրենց անհրաժեշտ աշխատակցին: Նույնն էր մյուս մասնագիտությունների դեպքում: Հա-

[14] **Hattox R. S.**, *Coffee and Coffeehouses, The Origins of a Social Beverage in the Medieval Near East,* University of Washington Press, 2015, p. 42.

[15] **Mokhber S.**, *The Persian Mirror…,* p. 101.

[16] **Mobarhani M.**, Ghahve *Khaneh, The Culture of Coffee House…*

մապատասխան համքարության պատկան սրճարաններում նշված համայնքից դուրս գտնվողների մուտքն արգելված էր: Այստեղ այցելուները խաղում էին խաղեր, ունկնդրում էին պոետներին ու պատմություն պատմողներին [17]:

Սրճարանները շարունակեցին մնալ Սեֆյանների օրոք ձևավորված պոետների ու աշուղների ելույթների հիմնական վայրերը, ուր, վստահաբար, հանդես են եկել մեծ թվով պոետներ, սակայն չի պահպանվել ոչ մի տեղեկություն: Միակ պոետը, ում մասին պահպանվել են հիշատակություններ, Շաթեր Աբբաս Սոբոուհին է: Վերջինս Ղաջարների օրոք ընկերոջ հետ այցելում է Խան Մարվի սրճատուն, ուր ներկայացնում է իր պոեմները: «Շահնամեի» ընթերցումներին զուգահեռ՝ քնարական այլ ընթերցանություններն ու պերճախոսությունները մեծացնում են սրճատների գրական գործառույթը մասնավորապես Ռամադանի ժամանակ[18]:

Աշուղների մուտքը 19-րդ դարի Արևելյան Հայաստանի սրճարաններ

Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանում սուրճի կիրառությանը, ապա այդ մասին հիշատակություններ կարելի է գտնել գրավոր մի շարք աղբյուրներում: Սակայն պետք է նշել, որ 17 և 18-րդ դարերի տեղեկությունները բավականին սակավ են, իսկ հիմնական նյութը թվագրվում է 19-րդ դար:

17-րդ դարում գործող սրճարանների մասին վկայություն կա Ժան Շարդենի գրառումներում, ուր հիշատակվում է, որ Հայաստանով անցնելիս նա հիվանդացել է դիզենտերիայով, և նրան երկու տղամարդ բուժել են սուրճով[19]:

Երևանում պարսկական շրջանում սրճարանների գործունեության մասին հիշատակում է Երվանդ Շահազիզն իր «Հին Երևան» աշխատությունում[20]. Երևանի բերդի ներսում գործող կառույցների շարքում նա նկարագրում է նաև երկու սրճարաններ: Սրանք փաստում են, որ պարսկական տիրապետության ժամանակ՝ սկզբում Սեֆյանների, ապա Ղաջարական դինաստիայի օրոք սուրճը մուտք է գործել Արևելյան Հայաստան: Սակայն պետք է ենթադրել, որ այն հանրության լայն խավերի շրջանում մեծ տարածում չի ունեցել:

---

[17] **Rezvani, A. N.,** *A Social History of Modern Tehran Space, Power, and the City*, Cambridge University Press, 2023, p. 45–46.

[18] **Basouli M., Derakhsh S., Masadi M.**, Coffee House: A Historical Attraction in the Landscape of Urban Tourism in Iran, *MANZAR,* Scientific Journal of Landscape, 14(58), 20– 27, Spring 2022, p. 24.

[19] **Sir John Chardin**, *Travels in Persia…,* p 20.

[20] **Շահազիզ Ե.**, *Հին Յերեվանը*, Յերեվան, «Մելքոնյան ֆոնդ» հրատ., 1930, էջ 120:

18–19–րդ դդ. գործող սրճարաններին անդրադառնալիս հարկ է նշել, որ դրանք հիմնականում նախատեսված են եղել սկզբում պաշտոնյաների, ապա արհեստավորների համար, որտեղ հանդիպումների, մտքեր փոխանակման գործառույթից զատ իրանական սրճարանների նման ունկնդրել են ժամանակի աշուղներին ու պոետներին: Սրճարաններն էլ իրենց հերթին վերջիններիս համար ծառայել են արվեստը ներկայացնելու հարթակներ:

Պետականության բացակայության պատճառով հայ աշուղները հիմնականում գործել են օտար երկրներում՝ Պարսկաստանում, Թուրքիայում, Վրաստանում և այլ գաղթօջախներում[21]:

Երաժշտագետ Մուշեղ Աղայանի «Հայ գուսանները և գուսանական աշուղական արվեստը» ուսումնասիրությունում նշվում է, որ Թիֆլիսի (հայ–վրացական) դպրոցն Անդրկովկասի խոշորագույն դպրոցն է, որի հիմնադիրն է ուշ միջնադարի բանաստեղծ–աշուղ Սայաթ–Նովան[22], որն արդեն իսկ ծանոթ լինելով սուրճին՝ իր «Քամանչա» բանաստեղծության մեջ հիշատակում է. «...Ածողիտ էրկու կու շինիս. առաչ չայի, ղափա գուզիս..»[23]: Սայաթ–Նովայի ուսումնասիրողներից Գևորգ Ախվերդյանն այս բանաստեղծությունը վերլուծելիս հիշատակում է[24], որ 18–րդ դարում վրացահայերը հյուրին նախ հյուրասիրում են սուրճ կամ թեյ և նոր ճանապարհում, իսկ սուրճը անվանում են «ղափա» բառով:

Հետաքրքիր է նաև այս առումով թիֆլիսահայ գեղանկարիչ Գրիգոր Շարբաբչյանի «Սայաթ–Նովա» կտավը (նկ. 3): Դրանում աշուղի երաժշտությունն ունկնդրող հարսները պատկերված են սուրճի սեղանի շուրջ, որը վկայում է, որ արդեն այս շրջանում առօրյա կյանքում սուրճը լայնորեն օգտագործվում էր:

Սուրճի գործածության համեմատական տարածում հայ բնակչության միջավայրում նկատվում է ցարական իշխանության ժամանակ՝ 19–րդ դարի երկրորդ կեսից, մասնավորապես՝ Ալեքսանդրապոլում, ուր միաժամանակ բացվում են մի քանի սրճարաններ: Դրանք հիմնականում արհեստավորների հավաքատեղիներ են եղել: Այստեղ նույնպես, ղահվեխանաները տղամարդկանց ժամանացի ու հանդիպումների տեղ էին, որտեղ ժամանակ առ ժամանակ նաև ելույթներ են ունեցել ժամանակի հայտնի աշուղները[25]:

Մինչև 19–րդ դարի վերջը բոլոր արհեստավորները խմբավորվել են համքարությունների մեջ, որոնք էլ իրենց հերթին ունեցել են հովանա–

[21] Նույն տեղում, էջ 4:

[22] **Աղայան Մ.**, *Հայ գուսանները և գուսանական աշուղական արվեստը*, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 7:

[23] Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գևորգ Ախվերդյանի ֆոնդ , 1–I, էջ 91բ:

[24] Նույն տեղում:

[25] **Սահակյան Հ.**, *Հայ աշուղներ XVII–XVIII դդ.*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 9:

վոր սուրբ կամ սրբազան նախահայր: Տարբեր աղբյուրներում, որպես աշուղների հովանավոր, հիշատակվում է սբ Հովհաննես Կարապետ (Մկրտչի) անունը, իսկ որոշ աղբյուրներում նշվում է նաև Դավիթ մարգարեի անունը, քանի որ նա սաղմոսարան է նվազել և, հետևաբար, պետք է համարվեր աշուղների արհեստի նախահայրը[26] (նկ. 4):

Համքարությունների անդամներն ու հատկապես վարպետները ունեցել են իրենց հավաքատեղիները, որտեղ քննարկվել են արհեստի հետ կապված հարցեր: 19-րդ դարում ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում հաճախ նման հավաքատեղիների դերակատարումն իրականացնում են սրճարանները:

Աշուղական արվեստը 19-րդ դարում լայնածավալ զարգացման համար պարարտ հող է գտնում Արևելյան Հայաստանում՝ Ալեքսանդրապոլում, Երևանում, Սյունիքում: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Իրանում և Արևմտյան Հայաստանում բնակվող շատ հայեր նախընտրում են վերադառնալ Արևելյան Հայաստան:

Նշենք, որ Արևելյան Հայաստանում աշուղական արվեստի ինքնադրսևորումը սրճարանային միջավայրում զալիս է Արևմտյան Հայաստանից ու Թուրքիայից, ուր դեռևս 17-րդ դարից Կարինի, Վանի, Զմյուռնիայի, Կոստանդնուպոլսի հայ վաճառականների կողմից սուրճի ներմուծումն ու արտահանումը հնարավորություն տվեց այս բնամթերքը համարել ոչ միայն նոր ու հեռանկար ունեցող ապրանքատեսակ, այլև այն մուտք գործեց հայ ընտանիքներ, դարձավ կենցաղի առօրյա անբաժան ըմպելիք: Բնամթերքի կիրառությունն իր կարևորությամբ ու ծավալով այնքան ընդլայնվեց, որ արդեն 19-րդ դարում առանձնացվում էր որպես մասնագիտական առանձին զբաղմունք. այս արհեստների ու տնտեսական զբաղմունքների վերաբերյալ գրառումներում հաճախ է հանդիպում «դահվեճիներ» կամ «սրճագործներ» անվանում: Ոլորտի առանձնացման գործում, անշուշտ, կարևոր է եղել ոչ միայն պարզապես սրճավաճառությունը, այլև արհեստագործական քաղաքներում սրճարանների հիմնումը, որոնք դարձան նաև գուսանների, աշուղների ու ժողովրդական պոետների ելույթների տարածքներ[27]:

---

[26] **Աղանյան Գ., Հարությունյան Հ.**, Ալեքսանդրապոլի աշուղական արվեստ և համքարական ավանդույթ, *Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ) միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր,* Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոն, 2023, էջ 203:

[27] Ասվածի վառ օրինակ է Փոքր Ասիայի վերջին հայ աշուղներից ամենահայտնին՝ աշուղ Փեսենտին: Ծնունդով Սեբաստիայից աշուղ Փեսենտին համարվում է Փոքր Ասիայի արհեստավարժ վերջին աշուղներից: Նա կատարումներով հանդես է եկել ծնունդավայրում հայտնի Սուլու-Խաիվեռում («Ջուր» սրճարանը), որը 19-րդ դարավերջից հայտնի էր որպես աշուղների հավաքատեղի: Այստեղ տեղի էին ունենում տարբեր երկրների աշուղների հանելուկների (մուամմե) մրցույթներ, ինչպես, օրինակ, Փեսենտու հետ է տեղի ունեցել նույն սրճարանում. «Օրին մէկը լուր ելաւ թէ Սուլու-Խաիվէն երեք աշուղներ եկած են, յաջորդ օրը աշուղ Փէսէնտիին հետ մրցելու։ Ես՝ Ինճէեանս (դեպքերի վկան,

Սրճարանները՝ որպես արհեստավորական հավաքների և աշուղական երգարվեստի միջավայրեր, իրենց ուրույն դրսևորումը գտան Արևելյան Հայաստանում ռուս-պարսկական պատերազմից հետո (1826–1828 թթ.), երբ Ռուսաստանը, գրավելով Արևելյան Հայաստանի մի զգալի հատվածը, այն մտցրեց կայսրության կազմի մեջ: Այս իրադարձությանը ուղեկցեց հայերի գաղթի կազմակերպումն ու վերաբնակեցումը մուսուլմանների նվաճած հայկական տարածքներում: Իսկ 1836 թ. հետո Ալեքսանդրապոլում ռուսական կայազորի հիմնումը խթանեց, որ մոտակա քաղաքներից՝ Կարինից, Կարսից ու Բայազետից Ալեքսանդրապոլ տեղափոխվեն շատ հայ արհեստավորներ ու առևտրականներ: Արհեստավորների հետ այստեղ հայտնվեցին նաև համբավավոր աշուղներ և գուսաններ: Նրանց հավաքատեղին քաղաքի նորաստեղծ սրճարաններն էին, ուր արհեստավոր մարդիկ հավաքվում էին աշխատանքից ազատ ժամերին (հատկապես՝ ձմռանը): Հաճախ հեռավոր վայրերից ժամանում էին մեծահռչակ աշուղներ և այս սրճարաններում հասարակության ներկայությամբ մրցում տեղի աշուղների հետ: Հետաքրքիր է, որ սկզբնական շրջանում տեղացի աշուղները ստեղծագործում էին առավելապես տարածաշրջանում գերակայող դիրք ունեցող թուրքերենով ու պարսկերենով: Սակայն քաղաքում վերաբնակվածների նոր սերունդը հետզհետե սկսեց ավելի քիչ գործածել օտար լեզուները և գերադասություն տալ հայերենին, որը տարածվեց նաև աշուղների ստեղծագործական լեզվի վրա՝ աստիճանաբար դարձնելով այն մայրենի: Հատկապես մեծ տարածում ստացան Կարսի բարբառներով հորինվող երգերը: Փաստորեն, աշուղների համար հայերենն աստիճանաբար դարձավ իշխող,[28] քանի որ աշուղների հավաքատեղիում՝ սրճարաններում, հիմնական այցելուների լեզուն արդեն հայերենն էր:

Հատկանշական է, որ արդեն 19-րդ դարի 60-ականներին, ալեքսանդրապոլցիների ժամանցի անքակտելի և կարևորագույն բաղկա-

---

պատմողը), հետաքրքրելով մրցումը լսելու գացի: Մտայ Սուլու-Խահվէն, տեսայ բեմին վրայ ծալապատիկ նստած երեք աշուղներ, սազը ձեռքերնին: Մէկը պարսիկ էր, մէկը Ղարսեցի թուրք, իսկ երրորդ՝ Եոզկաթցի էր, նոյնպէս թուրք»: Հիշյալ աշուղը, մեծ համբավ ձեռքբերելով, 1894 թ. տեղափոխվում է Կ.Պոլիս և նույնիսկ նվագում սուլթան Աբդուլ Համիդի համար: Սակայն որոշ ժամանակ անց բարձրաստիճան մի օսմանցի զգուշացնում է, որ նրա կյանքին վտանգ է սպառնում, և հորդորում՝ հեռանալ: Փեսենտին հեռանում է Ռուսաստան, այնուհետև՝ Երևան, ապա՝ Էջմիածին: Նշենք՝ Ռուսաստանում ունեցել է տարբեր զբաղմունքներ: Կարծիք կա՝ ունեցել է սրճարան, որտեղ աշուղական երաժշտություն է հնչել՝ նաև իր կատարմամբ (տե՛ս Գըզըլեան Հ.Ա., Գ, 23/05/19, թարգմանութիւն՝ Շաղիկ Շահինեան Արծրունի «Սվազ/Սեբաստիա -*Աշուղ Փէսէնտի Արեւմտահայ վերջին մեծ աշուղը* (թարգմ.՝ Շաղիկ Շահինեան Արծրունի) 23/05/19: https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/sivasvilayet/sandjakofsivas/localcharacteristics/songashoughpesendi.html (մուտք՝ 14.02.2024):

[28] **Դուրգարյան Կ.Գ.**, *Շիրակի հայ աշուղները,* Երևան, «Սովետական գրող», 1984, էջ 4:

ցուցիչներն էին համքարային ակումբները (կլուբները), սրճարանները (ղայֆախանաները), պանդոկները (դուքանները), գինետներն ու ավելի ուշ՝ գարեջրատները: Պատմաազգագրական ուսումնասիրությունները վկայում են, որ 1860-ական թթ. Ալեքսանդրապոլում գործել են 26 սրճարաններ, որոնք քաղաքի մշակութային ներկապնակը ամբողջացնող կարևոր բաղադրիչներն էին[29]: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ համքարական ակումբ-սրճարաններ և ընդհանուր սրճարաններ: Հայտնի էին Կուզիկենց, Տալոյենց (Տալյանների), Հայկազունիների, Բախալբաշոնց մեծ սրճարանները: Քաղաքի յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր սրճարան-ակումբը, որտեղ աշխատանքից հետո հավաքվում էին էսնաֆական ավագանին, ծանրաբարո ուստաբաշիներն ու վարպետները[30] (նկ. 5):

Ակումբ-սրճարանները նաև քաղաքի կամ դրսի աշուղներին անբռնազբոս միջավայրում ունկնդրելու վայրեր էին: Աշուղական արվեստի հետ շփվելը ոչ միայն գեղագիտական, այլև հասարակական-քաղաքական, սոցիալական և կրոնա-բարոյագիտական խնդիրներ էր հետապնդում, քանզի աշուղներն էին միայն, որ բաց տեքստով կամ երբեմն այլաբանորեն կարող էին երգի լեզվով խոսել ալեքպոլցիներին և, ընդհանրապես, հայությանը հուզող բազմաթիվ հարցերի մասին: Այս սրճարաններում տեղի և շրջիկ աշուղները հայտնի արևելյան սիրավեպեր ու հեքիաթներ պատմելուց և միմյանց ու հանդիսատեսին հանելուկ ներկայացնելուց բացի՝ կազմակերպում էին մրցույթներ, որոնց ընթացքում հանդիսատեսից խաղագումար էին հավաքում, որի մի մասը հասնում էր աշուղներին, մի մասը՝ սրճարանատիրոջը, իսկ մնացյալը՝ հանելուկի պատասխանը գտնողին: Նշենք, որ ամենահամբավավոր աշուղները հանդես են եկել սրճարաններում, ավելին՝ յուրաքանչյուրն ունեցել է իր ելույթների համար մշտական սրճարան[31]:

Անդրադառնանք մի քանի աշուղների: Ալեքսանդրապոլի ամենահին աշուղներից է Ղեյրաթին, որը հիմնել է քաղաքի առաջին սրճարաններից մեկը՝ իր շուրջ հավաքելով թուրքասաց աշուղներին և ծավալելով ակտիվ աշխատանք[32]:

Աշուղ Հավասին (Հաճի Թաթոս) երգում էր իր մշտական սրճարանում: Աշխատավորությունը ամեն օր հաճախում էր սրճարան և նրան նվագել էր տալիս իր սիրած դաստանը կամ երգը և առատ վարձա-

[29] **Բազեյան, Կ., Աղանյան Գ.**, Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ (պատմաազգագրական ուսումնասիրություն), *Երևան-Գյումրի, Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ*, հ 2, 2014, էջ 50:

[30] Նույն տեղում, էջ 76-77:

[31] **Աղանյան Գ., Հարությունյան Հ.**, Ալեքսանդրապոլի աշուղական արվեստ..., էջ 206:

[32] **Դուրգարյան Կ.Գ.**, *Շիրակի հայ աշուղները...*, էջ 5:

տրում աշուղին: Աշուղ Պայծառեն զբաղվում էր դերձակությամբ և զուգահեռ թառ նվագում: Նրա հորինած երգերը դարձան սիրելի բոլորի համար և երգվում էին հրավերքներում, հարսանիքներում և սրճարաններում: Պայծառեն սրճարանում նստում էր աշուղների համար առանձնացված թախտին և իր գեղեցիկ ու սաղաֆով զարդարած թառը ձեռք առնելով՝ երգում էր ու նվագում հաճախորդների համար[33]:

Նշյալ աշուղներից աչքի էր ընկնում Ջիվանին (Սերոբ Ստեփանի Լևոնյան), որը համարվում է անցյալ դարի ամենամեծ աշուղը հայ իրականության մեջ, որ բազմադարյան աշուղական արվեստը բարձրացրեց մի նոր աստիճանի՝ ստեղծելով իր ուրույն ուղղությունը, որին հետևեցին հետագա շատ աշուղներ: Ընկնելով աշուղների «ոստան»՝ Ալեքսանդրապոլ, երիտասարդ Ջիվանին գտնում է իր երկրորդ ծննդավայրը և ամբողջ էությամբ կապվում աշխատավոր ժողովրդի հետ[34]:

Դեռևս 18 տարեկան պատանին իր առաջին ելույթներով հանդես է գալիս Շարա Տալյանի նախնիներին պատկանող Տալոյենց սրճարանում, որտեղ մշտապես ներկա էին երաժիշտներն ու գուսանները[35]:

Եզրակացություն

Ժողովրդի սիրած ժամանցի վայրերը ժամանակի ընթացքում՝ աշուղական արվեստի մայրամուտի հետ, կորցրին իրենց գործառութային վաղեմի հետաքրքրությունը: Գրականության, թատրոնի, մամուլի զարգացումը, դպրոցների աճը պահանջում էին մշակույթի նոր որակ: Արդյունքում աշուղական սրճարանները՝ որպես մշակութային միջավայրեր, հասարակական հավաքատեղիներ՝ դադարեցին գործել ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ Երևանում: Ուստի վերջին աշուղները իրենց համար ասպարեզ էին փնտրում կամ հասարակական խնջույքներում և/կամ հեռավոր շրջաններում ու գյուղերում, ուր տակավին սիրով ու հարգանքով էին ընդունում ժողովրդական երգիչներին՝ պոետներին ու աշուղներին[36]:

---

[33] **Աղանյան Գ, Հարությունյան Հ.**, Ալեքսանդրապոլի աշուղական արվեստ..., էջ 207:
[34] **Դուրգարյան Կ. Գ.,** *Շիրակի հայ աշուղները...*, էջ 9:
[35] **Տալյան Շ.**, *Դեպքեր, դեմքեր, մտքեր*, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, էջ 7–8:
[36] **Դուրգարյան Կ.Գ.,** *Շիրակի հայ աշուղները...*, էջ 16:

THE MINSTRELS (ASHUGHS) AND POETS IN ARMENIAN AND IRANIAN COFFEE HOUSES BETWEEN THE 17TH AND 19TH CENTURIES

TATEVIK SAROYAN
An Applicant
Yerevan State University
Matenadaran after Mesrop Mashtots

Abstract

This article explores the history of coffee and café culture in Armenia and neighboring Iran from the 17th to the 19th centuries. Cafés emerged as venues for public entertainment in major cities across the East and Europe during the 17th century. Initially, these were predominantly male-oriented places where folk artists, musicians, poets, and performers had the opportunity to showcase their talent and engage with the public. Notably, cafés served as a unique environment for intercultural communication and exchange.

There are accounts of folk artists from neighboring countries organizing "guest performances" in these cafés, highlighting the cross-cultural interactions that took place there. In both Iran and Armenia, artists from various regions shared their work, leading to a recognition of Armenian artists and writers in Iran (many of them were proficient in Persian). Similarly, Persian artists also performed in Armenian cafés.

Over time, the role of cafés evolved, and they gradually transformed from platforms for folk art performances into places for socializing, conversation, and discussion over coffee, appealing to a broader audience. However, as societal demands and artistic expressions changed, cafés lost their primary status as entertainment venues.

Keywords: Armenia, Iran, cafe, *ashugh*, poet, art, literature, music, poetry

ПОЭТЫ И АШУГИ XVII–XIX ВЕКОВ В АРМЯНСКИХ И ИРАНСКИХ КАФЕ

ТАТЕВИК САРОЯН
соискатель
Ереванский государственный университет
Матенадаран имени Месропа Маштоца

Аннотация

В статье рассматриваются этапы развития культуры кофе и кафе в Армении и соседнем Иране в XVII–XIX веках. С XVII века кафе стали популярными местами общественного развлечения в крупных городах Востока и Европы. Изначально это были в основном мужские развлекательные центры, где художники, музыканты, поэты и народные артисты могли проявить свои таланты и представить свое искусство публике. Примечательно, что кафе служили уникальной средой для межкультурного общения и обмена. Существуют свидетельства, что артисты из соседних стран выступали в кафе на «гастролях». Иранские и армянские писатели и музыканты были хорошо известны в Иране и владели персидским языком, что способствовало посещению кафе творческих людей из разных стран. То же самое касается выступлений персидских артистов в армянских кафе.

Со временем развлечения в кафе постепенно изменялись, превращаясь из мест для выступлений народного творчества в пространства для более широкой аудитории, где люди встречались и общались за чашкой кофе. Таким образом, с течением времени и изменениями в культуре кафе утратили свое первоначальное предназначение как особого увеселительного заведения и стали популярными местами среди широкой публики.

Ключевые слова: Армения, Иран, кафе, труппа (ашуг), поэт, искусство, литература, музыка, поэзия

Գրականության ցանկ

1. **Աղանյան Գ., Հարությունյան Հ.**, Ալեքսանդրապոլի աշուղական արվեստ և համքարական ավանդույթ, հոդվածների ժողովածու, *Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ) միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր*, Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023:
2. **Աղայան Մ.**, *Հայ գուսանները և գուսանական աշուղական արվեստը*, Երևան, Հայպետհրատ, 1959:
3. **Դուրգարյան Կ. Գ.,** *Շիրակի հայ աշուղները*, Երևան, «Սովետական գրող», 1986:
4. **Բազեյան Կ., Աղանյան Գ.,** Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ (պատմաազգագրական ուսումնասիրություն), *Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ*, h 2, 2014, էջ 7-120:
5. **Շահազիզ Ե.**, *Հին Յերեվանը*, Յերեվան, «Մելքոնյան ֆոնդ» հրատ., 1930:
6. **Սահակյան Հ.**, *Հայ աշուղներ XVII-XVIII դդ.*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961:
7. **Տալյան Շ.**, *Դեպքեր, դեմքեր, մտքեր*, Երևան, «Հայաստան», 1973:
8. **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, California, University of California Press, 2011.
9. **Basouli M., Derakhsh S., Masadi M.**, Coffee House: A Historical Attraction in the Landscape of Urban Tourism in Iran, *MANZAR*, Scientific Journal of Landscape, 14(58), 20-27, Spring 2022.
10. **Mokhber S.**, The Persian Mirror Reflections of the Safavid Empire in Early Modern France, New York: Oxford University Press, 2019.
11. **Hattox R.,** Coffee and Coffeehouses, *The Origins of a Social Beverage in the Medieval Near East*, University of Washington Press, 2015.
12. *Home Friend*, vol. 1, London: Society for promoting Christian knowledge, 1854.
13. **Sir John Chardin**, *Travels in Persia*, 1673-1677, New York: Dover Publication, 2012.
14. **Rezvani, A. N.**, *A Social History of Modern Tehran Space, Power, and the City*, Cambridge University Press., 2023.
15. **Weinberg B. A., Bealer B.K**, *The World of Caffeine: The Science and Culture of the World's Most Popular Drug*, UK: Routledge Press, 2002.
16. **Գրզրլեան Հ. Ա.**, Գ, «Սվազ/Սեբաստիա-Աշուղ Փէսէնտի Արեւմտահայ վերջին մեծ աշուղը (թարգմ.՝ Շաղիկ Շահինեան Արծրունի), 23.05.19. https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/sivasvilayet/sandjakofsivas/localcharacteristics/songashoughpesendi.html
(մուտք՝ 14.02.2024):

Արխիվներ և ֆոնդեր

1. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գևորգ Ախվերդյանի ֆոնդ 1-Ի:

Նկարների ցանկ

1. Իրանական ղահվե խանե (https://www.tasteiran.net/stories/10065/iranian-coffee-house-ghahve-khaneh)
2. ա, բ. Երաժիշտներ, Շահնամե, 1830 թ., Մաշտոցի անվան Մատենադարան ձեռ. 535, , թ. 154 բ և 369 ա
3. Սայաթ-Նովա, Գրիգոր Շարբաբչյան, Ժ-գեղանկար, 4791, © ՀԱՊ
4. Սաղմոսարանի կազմ, ԺԶ դար, Մաշտոցի անվան Մատենադարան, №10411
5. Աշուղական սրճարան Ալեքսանդրապոլում, Գևորգ Բրուտյան (ըստ՝ Հարությունյան Հ. 2016, էջ 210-216):

Ընդունվել է՝ 28.09.2024
Գրախոսվել է՝ 21.10.2024
Հանձնվել է կպ.՝ 11.09.2025

1

2 ա

2 բ

3

4

5